

Հայկական Ֆեմարան 42

Սարգսեան Հ. Գ. — Մխիթարայ Գոշի
Խրատք ոգեշահք 481

Հաղուհի Հ. Վ. — Ներդաշնակներ աշ-
խարհաբարը 516

Արտաշատի Արքեպս. — Պատմութիւն
Հալէպի քահանայից 537

*** Հայ Չեռագիրներու պանդխտութիւ-
նը Եւրոպայի մէջ 554

Հնախօսական

Ս. Սիրոշիա կամ Երերիա. — Ուխտա-
գնացութիւն ի Ս. տեղիս. (Թրգ. Հ. Ե. Փ.) 491

Գրական

Երեմեան Հ. Ս. — Վահան Թէքէեան
(գրական 40ամեայ յորելեանին ստիժով). 497

— Լէօ 513

Աննաեան Մկրտիչ. — Իմ տօնախմբու-
թեան երեկոյ ներկայ բարեկամաց կատակ
յանպատրաստից 535

Յովնանեան Հ. Վ. — Աղօթե՛ք, եղ-
բայր 536

Կրթական

Թումանյան Հ. Թադէոս. — Քրիստոնէա-
կան դաստիարակութիւնը արդիական ըմ-
բռնումներու հանդէպ 530

Թատրոն

Երեմեան Արամ. — Ռուսահայ թատրո-
նի պատմութիւնը 544

Հայկական մամուլ

Փ. Հ. Ե. — Հանդէս հանդիսից 555

Այլընտրանք

Խմբ. — Գատապարտուած յօդուածի
մ'առթիւ 493

Մասիս. — Գրական յուշ-երեկոյ Հ. Ար-
սէն Վազիկեանի յիշատակին 552

Խմբ. — Հանգիստ հոգւոյ Հ. Յակոբ Վ. ի
Տիրոյեան 560

Académie Arménienne

Sarkissian P. G. — Sermons de Me-
khithar Gosh 481

Hatsouni P. V. — Harmoniser l'Ash-
kharhabar (l'Arménien Moderne). 516

Mgr. Ardevast. — Histoire des prê-
tres d'Alep 537

*** Des manuscrits Arméniens émi-
grés en Europe. 554

Archéologie chrétienne

S. Silvia ou Aeteria — Peregrinatio
ad loca sancta (trad. par. P. P. E.) 491

Litterature

Erémian P. S. — Vahan Tékéian 497

— Leo. 513

Adjémian Meguerditch. — Une plai-
santerie dans le jour de mon onomastique
(improvisé) 535

Hovhannessian P. V. — Prions, mon
frère ! 536

Pédagogie

Tomadjan P. T. — La Pédagogie
chrétienne d'après la mentalité moderne 530

Théâtre

Erémian Aram. — Histoire du thé-
âtre des Arméniens en Russie 544

Presse Arménienne

P. P. E. — Revue des Revues. 555

Divers

Réd. — A propos d'un article désa-
prouvé 493

Massis. — Soirée littéraire à la mé-
moire du P. Arsène Ghazikian 552

Réd. — † P. Jacques Tiroyan 560

ՆՈՅՄԲ. - ԴԵԿ. ԹԻՒ 11-12

Բ Ա Ջ Մ Ա Վ Է Պ

Հ Ա Ն Դ Ի Ս Ա Ր Ա Ն

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

1843-1933

ՀԱՏ. ՂԱ ՌՅԶԲ-ՌՅԶԳ

Վ. Ե. ԵՏԻՎ Ս. ՂԱԶԱՐ

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ճ Ե Մ Ա Ր Ա Ն

ՄԽԻԹԱՐԱՅ ԳՈՇԻ ԽՐԱՏՔ ՈԳԵՇԱՀՔ¹

Երեք ճառեր են, երեքն ալ քահանայա-
կան վիճակին ի պատիւ և անոր կատարե-
լութեան ի նպաստ: Հրատարակութեանս
Արիթը. — Տեսայ որ կրօնական հար-
ցերը՝ ալ լրագրութեան օրուան նիւթ
զարձած են: Ամէն ոք այլեւս ինքզինքն
աստուածաբան և իմաստասէր կը զգայ.
որով՝ ամէն խնդիր իրեն համար մերկա-
պարանոց: Դիտելով Ազգիս մէջ կրօնքի
պաշտպանութեան անբաւականութիւնը, և
չար մշակներու, բողոքականութեան յա-
ճախութիւնը, նկատելով մանաւանդ ասոր
ջատագով զրքերու ապիրատ ոճն և ըս-
կըզբունքները, ճշմարտութեան և Ազգիս
մշտախարոյկ կրկնակի սիրով բոցատոջոր,
խրախուսուեցայ Միս. Գոշի սոյն գրութիւնն
ի լոյս ընծայել, իբր նմոյշ մը Հայաստա-
նեայց եկեղեցւոյ և մեր Ս. Հարց ուղղա-
փառ և անստգիւտ վարդապետութեան:

Եկեղեցական անձանց խնդրանօք զրաձ
է զասոնք հեղինակը, սակայն իրենց
սիրած լոյսը հասարակաց է: Թող կարգայ
զասոնք Հայ եկեղեցականը, Հայ գիտունն
ու ուսմիկը, կարգայ մանաւանդ Հայ զգօ-
նամիտ պատանին, և իւրաքանչիւր ոք իր
վիճակին համեմատ՝ օգտուի լուսաւորուի
ատոնցմով: Մէկ մէկ գոհար, չքնաղ մար-
գարիտներ են ասոնք, զորս սիրով կը
նուիրեմ ի վայելումն Ազգիս:

Չեմս.Գի.Բ. — Կը գտնուին Մխիթա-
րեան մատենադարանիս Թ, և, թիւ՝ 352
թղթեայ հին բոլորգիր և շատ լաւ պահ-
պանուած գրչագրին մէջ (27x18), էջ՝
628-659: Գաղափարուած է ժի դարու
վերջերը, Ս. Բարսղի, Եփրեմի և այլոց

1. Տես Սոփերը ԻԳ. և Բզմիւ. Սկստ. էջ 450.



մեկնութեանց հետ: Ուրիշ օրինակ մը չու- նինք ի վենետիկ, ուրիշ տեղ եւս հա- զուագիւտ են, որով կարելի չեղաւ բաղ- դատել:

ԺԱՍՄԱՆԱԿԸ. — Գրուած կը թուին Գան- ձակայ մեծ շարժին առթիւ (ՇՁԸ=1139) և անկից ոչ շատ հետու, Աղետին տպա- տրութիւնն որոշակի ակնարկուած է սոյն հատուածիս մէջ. (տպ. էջ 24) « վասն որոյ շարժումնք երկրի ... սրբոց և ան- սրբոց յուրմիջ թաղեցան մարմինք ի սիրտ մտանելով երկրի խորոց, Ձի հայիս սաս- տիւ՝ և դողայ: Սովք... սուր... յարձա- կուան թշնամեաց և գերուան աշխարհաց»: Նոյն ոճն ու լեզուն գործածեր է Մխի- թար իր ժամանակագրութեան մէջ 1184ին. (տես Հայապատում, Բ. էջ 276-77), ուր աւելի ընդարձակ կը նկարագրէ իր հայրենիքին թշուառութիւնը: Գիպուածին տխուր պատկերն աւելի զգայուն ու կեն- դանի գոյներով ներկայացուած է ճառե- ըրու մէջ: Ասոնք ուրեմն ժամանակագրու- թեան են երէց են, քանի որ արկածին յի- շատակն աւելի թարմ է դեռ հեղինակի մտքին մէջ: Դարձեալ 1184ին կամ ա- լելի վերջ՝ չէր կարող գրած ըլլալ զա- սոնք, քանի որ 45 - 50 տարի վրայէն անցած էր արդէն: Գիտենք նաեւ, որ նոյն թուականին, Ստեփանոս Բ Աղուանից կա- թողիկոսի, Չաքարէ և Իւանէ իշխանաց, վախտանգայ խաչենի իշխանին յանձնա- րարութեամբ՝ մեծամեծ գործառնութեանց ձեռք զարկած է: Բաց աստի՝ իր կառու- ցած զանազան վանքերու հոգարարձու- թիւնը՝ թոյլ չէր տար իրեն այնքան տարի վերջ նստիլ այսպիսի ճառեր յօրինել վա- դուց անցած զացած դէպքի մը վրայ: Նոյնպէս, արդէն այս ձեռագրին մէջ օրի- նակուած ըլլալը՝ հնութեան ամենամեծ ապացոյց մ'է: Չեռագիրն օրինակուած է « Յառաջնորդութեան տեառն Բարսղի » 1173 - 93 շրջանին արդէն ծանօթ էին հանրութեան. թէ որ 1184էն վերջ զըր- ուած ըլլային, այսչափ կարճ ժամանա- կին մէջ ինչպէս կրնային տարածուիլ և օրինակուելու արժանանալ: Ուստի ինձ

տրամաբանական կը թուի ասոնց գրու- թեան թուականը դնել 1140-1145 և ոչ աւելի ուշ:

ՀԱՐԱՅԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ոչ մէկ տարակոյս կը վերցնէ: Չայս կը հաւաստէ նախ ձե- ոագրին հնութիւնը, որ Մխ. Գոշին ժամա- նակակից է, և իւր դատաստանագրքէն հնա- գոյն: Վերջին ճառին մէջ ունի քանի մը սխալ ձեւեր, որ կրնային կասկածիլ տալ: Այս- պէս են էջ (տպ. 76) « նշխարով », « ամա- նով », « գինով », « հասան », և 78 « կար- զով ». որոնք աւելի օրինակողին վե- րագրելի են կարծեմ քան հեղինակին: Նոյնպէս վերջին մասերուն մէջ գրուած պատիժներու եւ ապաշխարութեան շատ մանրամասն ու ճիշդ ցանկը, զոր կարելի է զանց ընել: Բայց յիշելով թէ հեղինակը հայ կանոնագրքի առաջին գրիչ և հաւա- քողն եղած է, այս ալ կը պարզուի: Ժա- մանակին հոգեբանութիւնն ալ այսպէս կը պահանջէր:

* *

ԼԵՁՈՒՆ, արծաթի կոչուած դարուն է: Սահուն ու դիւրին, գերձ անսովոր բար- ղութիւններէ: Քանի մը քերականական և ուղղագրական անհարթ ու սխալ ձեւեր՝ հարկ եղաւ բարեփոխել, զորս անա կար- զաւ կը նշանակեմ:

ՍՐԲԱԳՐՈՒԹԻՒՆՔ. — Օ զերը գոյութիւն չունի զըջագրիս մէջ. ասոր տեղ միշտ առ- իակ իս երկբարբառին փոխան՝ սովորա- բար միայն ունի՝ յունական Սի համագոր- այդ եւս հնութեան ուրիշ փաստ: Հայերէն կանոնաւոր ձեւի վերածեցի: էջ 3 (տպ.) ունի « Նմանապէս և ընտիր ». շաղկապին վրայ ջնջման նշան կայ, ուստի թողու- ցինք: Նոյն էջին մէջ կը գրէ « ազալեաց ». փոխեցի « զազալեաց », որպէս զի սրբապատ- հետ չչփոթուի: Հոս դարձեալ սկիզբը զը- բած է « վասն ի չեւ խորհեցող », զոր յետոյ փոխած է « վանիլ և խոնկող ». այսպէս ուղղեցինք: էջ 4, 23 և այլուր, յաւէտ կը գրէ « գուի ». ստուգաբանական սկզբունքով և հայ լեզուի բոլոր գրողնե- ըրուն հետեւելով՝ գրինք գուր: Նոյն 4 էջով

ունի Հեփթայ. ուղղեցի Յեփրայ, իմա՝ Յեփթայայ: էջ 7. « Գառզ », ուղղեցինք զառնդ: էջ 10. « Ոչ արարեր նման քում » ... Նուն որոշ չի տեսնուիր. ուղղ. ըստ իմաստին: Նոյն էջին մէջ և ուրիշ տեղեր ունի « Իսրայելի », « այդ » են. զորս ուղղ. լինով: Դարձեալ, գրուած է հոս « ճըշ- մարիդ և կատարելագունիդ ». ուղղեցի « ճշմարտիդ »: էջ 13. « զնախագաղափա- րիդ ». դ գրին վրայ ջնջման նշան կայ: Ջնջեցի: Նոյնպէս « յալս իջեալ կամ խոր- հրոց » գրուած է. միջի երեք գրերը քիչ մ'աղտ են: Տրամաբանական թուեցաւ մեզ թողուլ զանոնք, եւ ըստ իմաստին կարդալ « յալս իջեալ կամ խորոց »: էջ 14 « կեցայց », իմա՝ կեցից. չփոխեցինք: էջ 15 և այլուր « բարոյն », ուղղ. բար- յոյն: էջ 19 կայ « զինուած անհիմն ». ուղղ. ըստ իմաստին՝ « շինուած անհիմն »: էջ 20 « Ամա անջրտի ». ուղղ. անջրտի: էջ 25, 30 և այլուր « ոչ կղեայ ». սո- վորաբար կ'ըսուի և կը գրուի ամփոփ ձեւով՝ կղէ: Սակայն սխալ չէ. միւսին նախնական ձեւն է: Այնքան օրինաւոր է, որ՝ արդէն յոգնական թուով կ'ըսեն « և- դար կամ կղեար: Աշխարհաբարին մէջն ալ սոյն պարզ ձեւը մնացեր է, « եղայ, - ար, - աւ »: Անփոփոխ պահեցինք: էջ 22 « Չգերեալն երբեմն լայ զԻսրայէլ ». ուղղ. « լայր »: Անցեալ բանի մը վրայ է խօսքը. ուրեմն փոխած վրիպակ մ'է: էջ 25 « աննիւազ ». ուղղ. աննիւազ. Յետոյ՝ « գե- րեադ յինէն դարձեալ ». ուղղ. դարձացեալ: էջ 27 « Արեգակդ ծագեցես ». ուղղ. Ա- րեգակդ: էջ 28 « փայլեցես զոգիս նո- ցա ». իմա՝ փայլեցուցես. չփոխեցինք: Նոյն էջին մէջ « Չքո շնորհդ ». դ գրին վրայ ջնջման նշան կայ, որով թողուցինք: էջ 29 ունի « Յեղուլն յիս », իմա՝ ի հեղուլն յիս: Ասկից և գուր բառին սխալագրու- թեան կը հետեւի թէ ձգ դարէն ի վեր արդէն նուրբ գրերուն հնչումը թաւերուն հետ կը շփոթուէր նոյնիսկ գրագէտներու բերնին մէջ: Հոս օրինակողը կարծեր է հեղուլ յ գրով կ'ըլլայ. որով հարկ չէ զգացած ի նախողիւր դնել. ինչպէս շատ

անգամ կը գրեն « յիշատակի սրբոց մար- տիրոսաց », փոխանակ ի յիշատակի: Միւս բառին մէջ ալ փիւրը՝ բենին հետ շփոթեր է, նոյն ձայնով հնչեր է: Տաճկահայ եւ ուսանայ հնչման հարցին կը վերաբերի այդ: Նոյնպէս էջ 29 « Աչալըչութիւն », ուղղ. աչալըչութիւն: Համեմատէ վերի տողերու զիտողութիւնը: էջ 32, տողա- զարձէ մը վերջ ունի ցու - ցուցի. առա- ջին ցու թողուցինք: էջ 41 « օրստօրէ ». ուղղ. օր ըստ օրէ: էջ 43 « Առ ման- կունակ », վերջին նուրի վրայ ջնջման նշան կայ. թողուցինք: էջ 44 « ի գրախօսս մի յարիցես ». ուղղ. յարիցիս: էջ 45 « բաւ- սասիրութիւն », կը նշանակէ ինքնիրմով բաւականանալ, հպարտ: Հայկազեանի և Առձեռնի մէջ չկայ: էջ 46, 48 ունի « քոց ». ուղղ. քոյոց: էջ 49 « մեծարայ ». ուղղ. մեծարաւ: էջ 51 « Ողորմութեամբ առնել. և տրամութեանն ». առնել բառին վրայ ջնջման նշան կայ, ուստի ըստ ի- մաստին թողինք: էջ 52 « Առաքինութիւն հասանել ». ուղղ. յառաքինութիւն: էջ 56 « Արքարութեանն ». ուղղ. արքարու- թեանն: էջ 64 « Միայնոյ ». ուղղ. մի- այնոյ: էջ 67 « հարմարիմք ». ուղղ. յար- մարիմք: (Յիշուի վերի զիտողութիւնս հնչման նկատմամբ): էջ 66 « զանցանս ». ուղղ. զյանցանս: էջ 70 « Յորժամ հան- դերձեցիս ». ուղղ. հանդերձեցիս: էջ 75 « յորս կանակ ». այս երկու բառերը ձեռա- գրի լուսանցքէն են: էջ 77 « Էւ երեք ». շաղկապին միայն եչ գիրը կայ: Բովան- ղակեցինք: էջ 79 « Չերիս մասն ». թերեւս ասան կամ տասն, ինչպէս քիչ մը ստորեւ կայ: Չփոխեցինք: Նոյնպէս, « թէ օթի ջրով », իմա՝ օթեանի, իջեանի: էջ 80 « ա ամ մի ». առաջին այբն ի բաց թո- դուցինք, որ մի ըսել է, վրիպած և կըրկ- նութիւն էր: Նոյնպէս, « ժամանակն կար- ձել ». ուղղ. զժամանակն: Թէպէտ և հոս քիչ մը ուսմիկ լեզուով գրուած է, որով կարելի էր առանց զ նախորդին եւս թողուլ:

Ոճն ընտիր է: Քաջ հայկաբան է և արուեստագործ: Հանդիսաւոր կամ վսեմ շարադրութեան կը ձգտի: Այս բոլոր յատ-

կութիւնները մասնաւոր կերպով Առաջին ճատին մէջ զգալի են: Ս. Հարց խորհրդաւոր և աստուածարեալ ոճ մ'ունի, ուր բանաստեղծական խանդն ու ճաշակն ալ չեն պակսիր: Այնքան շնորհ, այնպիսի օծում և ոգի կը փայլի սոյն գրութեանց մէջ, որ՝ մարդս կը դիւթուի, կը ձգուի, կը տարուի իրենց գեղեցկութենէն: Կարգացողն՝ իր վիճակին ուղղութեան և հոգւոյն փրկութեան կարեւոր սնունդն ու միջոցները կը գտնէ հոն: Սիրտը՝ անոյշ զիղջ մը կը զգայ, և այդ «բազմահոգ միտքը հակող յարկէն» վեր կը բարձրանայ, կը սփոփի: Զուտ կրօնական ճառեր են, եւ իրենց այդ ծրագրէն երբեք չեն շեղիր: Օրուանս «կրօնագիտութիւն» կոչուածներէն որքան տարբերութիւն: Արդի «Քրիստոնէական»ի մը մէջ, Հայ ընթերցողը, տեսակ մը հայրենասիրութեան եւ պատմութեան, կոյտ մը անպէտ բացատրութեանց և պատիպատ արդարացուցմանց անել բաւիղի մը մէջ ինկած՝ կը շուարի, ընելիքը չի գիտեր:

Երբեմն նախագասութեան իմաստը՝ արուեստակեալ շարադրութեան գոհ կ'երթայ: Դիւրութեան համար քանի մը կէտերու

ԼՈՒԾՈՒԾԸ կամ լուսարանութիւնը պիտի դնեմ, զանոնք քիչ մը պարզած ու հասկանալի դարձուցած ըլլալու յուսով:

Այսպէս, էջ 2 կը գրէ. «Եւ զի նախաշարի հանուրքն են եղեալ իսկզբանց այսմիկ զարմանազան իրի»: որ է՝ Եւ զի ի սկզբանէ հանուրքն (ամենայն ինչ) եղեալ են նախաշարի զարմանազան իրիս այսմիկ:

Նոյնպէս «Երկրորդ զհաւանողն ցուցեր հայր քում բանի»: այսինքն՝ Զհաւանողն բանի քում՝ ցուցեր երկրորդ հայր քեզ լինել: Կ'ակնարկէ թերեւ Յիսուսի այն խօսքին «Որ առնէ զկամս Աստուծոյ՝ նա է իմ եղբայր և քոյր և մայր» (Մարկ. Գ, 35): Հեղինակը քահանայից համար զրած է, իրենց ուղղած է իր խօսքը. ուրով տգեղ պիտի հնչէր այդ մարդու մը ըսել՝ դուն մայր ես:

Դարձեալ, էջ 12 ունի. «Զի և ոչ քահանայապետն իւրոցն մատչի թարց, այս

է՝ սրբանորոգ անձամբ»: Ըսել է անշուշտ, Զի և ոչ քահանայապետն մատչի առանց պատարագացն որ վասն մեղաց անձին իւրոյ, այս է սրբեալ և նորոգեալ: Ակնարկած կը թուի Երբ. Թ., 7:

Դեռ աւելի մութ է յաջորդը, էջ 13. «Զիարդ բազմաց, որ ոչ ինձ միայնոյ, ունայն ես, ո՞ յիմմէ առցէ ի լրմանէ»: Թերեւս ըսել կ'ուզէ. «Ես որ ունայնս եմ, զիարդ՝ ոչ միայն ինձ (այլ և) բազմաց (եղէց լուսատու). ո՞ յիմմէ առցէ ի լրմանէ:

Ոչ նուազ խրթին է և այս, էջ 15. «Զի հաւատ, աւետարան, ուսումն և կրից մատնչին, և դարձումն խոցողին, և զըղջումն խաչողաց՝ թէ ոչ ամենեցուն»: Գծուար է ասոր իմաստը գուշակել: Նախորդներով ինքզինքը խաչահանուներէն, խոցողէն, մատնիչէն, հեթանոս ու Հրեաներէն ալ վատթարագոյն կը դնէ: Կարծեմ ուրեմն առեղծուածին մօտաւոր լուծումն այս է. Տեսանեմ հաւատովը՝ օգտեալ ըզՀրեայս, աւետարանաւ՝ զհեթանոսս լուսաւորեալ. քաջ գիտեմ և զկիրս մատնչին և զխոցողին դարձ, գիտեմ և ի խաչողաց իսկ ի գեղջ եկեալս՝ թէ և ոչ ամենեցեան: Այնքան մեծամեղներու օրինակաւ, թէպէտ և ինքն ալ կը յուսայ փրկուիլ, սակայն իր այս յոյսը զինքը վախի մէջ կը ձգէ, որ՝ առանց յանձնապատասխանութեան, աշխատի՝ թերեւ անոնց նման փրկութեան արժանանայ: Նախադասութեան լռելեայն արժացուելիք մասերը՝ պէտք է յարմար կերպով լրացնել, որով իմաստ մը կ'ունենայ:

Ահա ուրիշ մը ոչ այնքան դիւրին, էջ 17, ունի «Անհնարինք, երկրորդ, զկնի՝ են Աստուծոյ հնարաւորք, մարդկան. թէպէտ և նուազ»: Կիտաղրութիւնը ես կարգեր եմ: Իմաստը հաւանաբար այս է. Ապա դարձեալ, որ անհնարինքն են մարդկան՝ հնարաւորք են Աստուծոյ. թէպէտ և նուազ: Այդ վերջինն ալ «թէպէտ և նուազ» Աստուծոյ կատարելութեան կ'երթայ մարդկան անհաւատութեան և կամ մեղքի պատճառաւ, որ Աստուծոյ կարո-

ղութեան տեսակ մը չափ և սահման կը դնէ, ինքզինքն իր բարիքներէն զրկելով: «Ոչ արար անդ, կ'ըսէ Աւետարանը Յիսուսի համար, զօրութիւնս բազումս վասն անհաւատութեան նոցա» (Մտթ. ԺԳ, 57-58). հոս ալ նոյն իմաստն է:

Կատարեալ հանելուկ մ'է նաեւ այս. (էջ 48) «Շէ և ֆէ և Նզ՝ բնաւ մի՛ ումեք ասիցես, զի մեծ պատուէր է ի Գրոց վասն այդոցիկ»: Միայն Նզ, կարելի է ենթադրել թէ նգովնալ կը նշանակէ. իսկ միւս երկուքն ինչ են:

Ճառերուս ոճն ու լեզուն, և բոլոր արտաքին արժէքը կշռելէն վերջ, անցնինք հիմակ անոնց ներքին քննութեան, վայրկեան մը անոնց հոգւոյն մէջ թափանցենք և զմայլելով դիտենք անոնց մէջ ծածկուած գանձը, կարեւորագոյն տարրը՝ լուսաւոր

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ըստ իւրաքանչիւր գլխոց: Երբեակ ճառերն իրենց հոգեշունչ կատարելութեամբ Միս. Գոշի ժամանակակից Լատին Ս. Վարդապետաց, Բեռնարդոսի, Անսելմոսի և Բոնաւենտուրայի նման երկերէն վար չեն մնար: Առաջին ճառը յատկապէս քահանայական վեհ աստիճանին նուիրուած է: Իրը զրական և ջատագովական գործ, իր վարդապետութեանց զանազանութեամբ և ամէն բանով՝ միւսները կը գերազանցէ: Միւս երկուքն իրենց նիւթին մէջ սահմանափակուած են: Առաջինով՝ հեղինակը կը կանգնի իրը ներկայացուցիչ և պաշտպան, իրը արծաթ բերան և քաղցր արձագանգ մեր Ս. Հարց ուղղափառ դաւանանքին: Մեր կրօնքին զանազան հարցերուն շուրջ շատ հետաքրքրական տողեր ունի, որով մեզ եւս ուշագրաւ: Աւելի ցայտուն կէտերը պիտի պարզեմ հոս ի գիտութիւն մեր ազգայնոց:

ՔԱՆԱՍՏՆ, իրը այլ ոմն Քրիստոս (էջ 7) «Աստուած յԱստուծոյ» մ'է. «Կելոյ պատճառ է կենդանեաց» հոգեւոր կեանքին մէջ: Հետեւաբար, մարդկութիւնը՝ առանց անոր՝ մեղաց ծանրութեան ներքեւ ընկճուած, անշունչ անկենդան դիակ մ'է: «Հանապազօր զհուրդ կրէ, Աս-

տուած». «Յերկրի կապէ և յերկինս արձակէ. յերկինս փակէ, և յերկրի ընդարձակէ. նմանեալ հիմնողիդ երկրի և արարողիդ զերկինս խորհրդով»: Քահանայական իշխանութեան վսեմութիւնը, ասկից լաւ կարելի չէր պանծացնել: Զօրավար մ'է քահանան, և Աստուծոյ ժողովրդեան առաջնորդ ու ռահվիրայ. որով կը գոչէ հեղինակը՝ (էջ 27) «Ընդ անկեալ զօրավարիս՝ զօրականացն նպաստ լիցիս, թազաւոր բարձրեալ»: Նա (էջ 8) «Զհոգին առնէ երկինս ի բնակիլն քեզ փառօք, և զմարմին՝ երկիր»: իր կապելու և արձակելու զօրութեամբ, որով հոգին արդարեւ մաքուր տաճար մը կը դառնայ Աստուծոյ բնակութեան վայելուչ: Բայց (էջ 71) «Որ ըստ բնաւն անցանէ, Մարմնոյ քո և Սրբան սպասաւոր և ճաշակող» որով (էջ 9) «Զերկինս զողացուցանէ անեղ՝ առմամբ Բանին»: և այդ է իր գերագոյն պատիւը: Անոր համար (էջ 6) «Ամենազան» անուններ տրուած են քահանայից. «բաշխող, տէր, առաջնորդ, լուսաւորիչ, վարդապետ, հայր, դայեակ, դաստիարակ, սին, պարիսպ» են: Աստիճանին վեհութիւնը պարզելէն վերջ, կը ցուցնէ թէ ինչ առաքինութիւն կը պահանջուի Ս. Խորհրդի պաշտօնեաներէն: Էջ 64 «Գեղազանցութեամբ բարեաց ի դէպ է զարդարիլ քահանայից, եւ ոչ հասարակութեամբ»: Տարիքը՝ 25էն աւելի ըլլայ, «զի... չար է իսկութեամբ թերի գտանիլ ի պաշտօնն»: Ապա թէ ոչ (65) «Եթէ ի տեսողացն խոտին՝ յառնել, ի նստել, ի կալ և ի գնալ, և այն ի համազգեացն, որչափ և ի հրեղինաց սպասաւորաց աստուածային խորհրդոյն: Եւ եթէ զմարմնական կերակուրն անկարգաբար ուտեն, բազում անգամ և ծիծաղելի համասեղանից, ըստ որո՞ւմ օրինակի զհոգեւորականն և զերկնայինն գիտիցեն ուտել զկերակուր»: (71) «Սրբեսցիս նախ՝ եւ ապա ի սրբութեանն մատիցես»: (70) «Մի՛ ի պատճառս ազահութեան առնիցես (զխորհուրդն) զձրի փրկութիւնն աշխարհի»: «Մի՛ առնիցես փառասիրութեամբ»: (71) «Յամե-

նայն ժամանակի՝ մի դիտաւորութիւն քեզ լիցի, կամացն Աստուծոյ հաճոյութիւնն»։ (44-5) «Դատարկակեաց մի՛ լիցիս... բաժանեա՛ զօրն քեզ ի գործ, յաղօթս եւ յընթերցումն»։ (69) «Ուսումնասէր լինել»։ (50) «Մայր ամենայն չարեաց՝ պղերգութիւնն է»։ Հաւասարապէս գործնական և ոսկի տառերով գրողներ խրատներ են։ (58) «Տուրեւտութիւն վաճառի, շահի վասն՝... մի՛ առնիր, ապա թէ՛ առնիցես՝ տուր առաւել և առ սակաւ»։ (46) «Մի՛ լինիր ընչաժողով, և մի՛ որսար զմեղուս... այլ լեր դու իմաստուն մեղու Քրիստոսի»։ (52) «Եթէ կամիս մեծ լինել՝ խոնարհ լեր»։ «Զչափ անձին քո ծանիր յամենայն իրս»։ (60) «Յիւրաքանչիւր աւուր հանդէս առնիցես մտաց քոց... և ուղղիցես զսխալեալն բազում փութով», եւն։

Քահանայական վիճակին ըմբռնումն ահա այս էր մեր նախնեաց քով, և բողոքական համալսարանները յաճախելէն առաջ՝ մեր եկեղեցական դասակարգը շատ աւելի հայրենասէր և շատ աւելի գիտուն էր, քանի որ աւելի սուրբ էր և հարազատ։ Օտար համալսարանները հոգեպէս և ազգայնապէս աղիտաբեր են մեզ, այլասերման հզօր առիթ եւ աղանդներու ամուր հանգրուան։

ՊՍՏԱՐԱԳԻ կամ Ս. Հաղորդութեան վարդապետութիւնն ալ շատ որոշ է։ Քահանայագործութեամբ՝ հացն ու զինին կը հրաշագործուին, կը գոյափոխուին և կ'ըլլան ստուգապէս Մարմին և Արիւն։ Բողոքականաց կամ լուծեցամիտ շատ մը հայ թերթերու կարծիքներն ու թուիք, և նուաստացուցիչ բացատրութիւնները, թէ «յիշատակ» է եղբր, թէ «պատկեր» է, «օրինակ» է, «նմանութիւն» է, «այլաբանօրէն» ըսուած է, եւն եւն, հոս տեղի չունին։ Քահանան (7) ճաշակող է «Մարմնոյ և Արեան»։ (8) «ՅԱստուածդ կայ՝ ի միաւորին ըսմ ի նմա, և զանձառդ մատակարարէ պարզեւս օր ըստ օրէ»¹։ Աստուած ինչպէս կրնար միաւորուիլ քահանային հետ՝ եթէ ոչ ճաշակմամբ, եւ ինչո՞ւ պիտի միանար նա Աստուծոյ հետ,

եթէ իր ճաշակածն Աստուած չըլլար։ (8) «ԶՄարմինդ կազմէ հաց, և զԱրիւնդ նւիրէ բաժակ»։ Եւ ճիշտ այս է խորհուրդը։ Քրիստոսի իսկական Մարմին և Արիւնը, իբր հասարակ հաց ու բաժակ, ընտանի ձեւով կը մատուցանէ ժողովրդեան, որ այնուհետեւ առանց վախի, այլ միայն հաւատալով՝ կը ճաշակէ։ Ապա թէ ոչ, եթէ նւիրապէս թանձրութեամբ Մարմին և Արիւն ներկայանար մեզի, նախ խորհուրդ պիտի չըլլար, և երկրորդ՝ մեր բընութիւնը պիտի խորշէր, պիտի չհանդուրժէր, պիտի չհամարձակէր մօտենալ Անոր։ Իր ըսածին այնքան վստահ է հեղինակը որ կը գոչէ (9) «Զհրեղէնսն սոսկացուցանէ ճաշակմամբն»։ Հրեշտակներն ինչո՞ւ պիտի սարսափէին թէ որ ճաշակածը սովորական բան մ'ըլլար։ Բայց դեռ աւելի կը պնդէ և ամէն կասկած կը փարատէ ներկայ ճշմարտութեան նկատմամբ գրելով՝ «Զերկինս զողացուցանէ ահեղ աւամբ Բանին», և «Ընդ ինքեան զԲանդ բերէ բարձեալ»։ Ասկից աւելի յստակ չէր կրնար խօսիլ։ Քահանային առածն ու ճաշակածը այլեւս հացի և զինուոյ պատրուակեալ անուններով չի ծածկելը, այլ յայտնի կ'ըսէ Բանն է, Աստուծոյ իմաստութիւնը, Աստուծոյ Որդին է ճաշակեալը։ Սակայն այս ալ Ս. Երրորդութեան եւ Մարդեղութեան պէս «Մեծ» և «Խորին» խորհուրդ մ'է։ որուն առջեւ՝ ինչպէս ամէն ստեղծեալ միտք եւ հանճար, մեր գաղտնադիտուն հնարագիտութիւններն ալ պէտք են խոնարհիլ ամփոփուիլ սեղմուիլ իրենց անձուկ չափ ու սահմանին մէջ։ Հոս ալ Մի. Գոշ իբր քրիստոնեայ, իր իմաստութեան և գիտութեան յետին եզր ու կատարելութիւնը՝ կը գտնէ այդ վսեմ խօսքին մէջ. Հաւատա՛մ։ (16) «Հաւատա՛մ, այս է Մարմին իմ՝ հաց. և Արիւն իմ՝ բաժակ։ Զոյգ է կամելն՝ և եղեն։ Հրամայեաց՝ և հաստատեցան»։ Ինչ որ դարեր վերջ, Պոսուէ, գաղղիացի պերճաբան իմաստասէրը պիտի կրկնէր. թէ եւ

1. Ամենօրեայ պատարագը կ'ակնարկէ։

ոչ այնքան ազդեցիկ և շքեղ ոճով։ Պատարագը, Ս. Հաղորդութիւնը (9) «Անձախելի հուրն» է, նման անոր՝ զոր Մովսէս մորենոյն մէջ կը տեսնէր։ (27) «Առիթ փրկութեան (է նա) և օժանդակ կենաց»։ Եթէ գերբնական բան մը չըլլար, ինչպէս կարող էր փրկութեան պատճառ և ներկայ կեանքին օժանդակ հանդիսանալ հոգւոյ և մարմնոյ բիւրաւոր վտանգներուն դէմ։ Ապա Ս. Խորհրդոյ յաճախելն ակնարկելով՝ կը գրէ (16) «Մեռեալ ուրեմն են անձաշակըն»։ քանի որ Քրիստոսի խօսքն է, թէ «Յիս բնակեցցէ և ես ի նմա»։ Ս. Ներսէս Շնորհալին ալ իր Ընդհանրականին մէջ կը պատուիրէ հաւատացելոց տարին գէր կրկն աւգաւ մօտենան այդ փրկարար Խորհրդոյն։ Կը տագնապի սակայն հեղինակը, եւ ինքզինքը երկուսուրի մէջ կը գտնէ. (16) «Մարուր հանդիպել ոչ կարեմ, միանգամայն հեռանալ՝ վտանգիմ. ոչ կարեմ ազատ ի կրից լինել բնականաց»։ Ասոր ալ դեղն ու դարմանը Ս. Հաղորդութեան մէջ կը գտնէ, ըսելով (17) «Եւ զի անփախչելի միանգամայն իցեմք արատի կազմածին... ոչ յերկինս ի վեր ելանել, և անտի իրացն և կարգին լինել տեսող»։ Կը նշանակէ. Եւ որովհետեւ չենք կրնար բոլորովին փախչիլ ազատիլ մեղքի սլաքներէն... պէտք չէ՞ որ երկինք ելլենք, և հոնկից ազատելու կերպը տեղեկանանք սորվինք։ Ինչո՞վ պիտի ելլենք երկինք. Հաղորդութեամբ։ Քանի որ Անով, ըստ հեղինակին (8) մեր հոգին կ'ըլլայ երկինք մը։

Քահանային, Պատարագին ու Ս. Հաղորդութեան վրայ՝ այս է, ոչ միայն այս հեղինակին, այլ ամբողջ Հայ եկեղեցւոյ համոզումն և Հաւատքը։

ՔԱՆՏԱՐԱՆԻ կամ Ննջեցելոց հոգւոյն նուիրուած տողերը՝ ամենագեղեցիկ մասը կը կազմեն։ Բարեպաշտ են միանգամայն և սրտագրաւ, զգայուն և յուզիչ։ Ներդաշնակ, գողտը ու դիւրին՝ ամենանուրբ ճաշակով յարմարած լեզու։ Մինչ մեր սիրտը կը մորմոքեցնէ անդարձ սիրելեաց սգալից յիշատակաւ, աստուածային յու-

սոյ զուարթ նշոյլ մը կը սփռի մեր հոգին։ Քաղցր է լսել այդ փոքր դրուագն ամբողջութեամբ։

Էջ 27-28. «Ընդ ննջեցելոյս ի մահ, յանուն քո սուրբ ննջեցելոցն՝ լիցիս յաւութիւն ձայնիւ։ Յաղագս որոյ զամենայն կրեցեր, և զմահ, անմահդ։ Զբոբոբոբումն ջահից եւ լապտերաց յանուն քո վասն սոցա, բնկալ, լոյսդ Հօր, Յիսուս. և ըզբուրումն խնկոց ի յիշատակս նոցա, հուրդ կնդրկի կենաց։ Ի պայծառանալ սրբութեան քո տաճարին վասն նոցա, փայլեացես զհոգիս նոցա, ամբաւդ ճառագայթ։ Զյիշատակս սրբոց զոր տօնեմք քեզ ի հաճոյս՝ արասցես բարեխօս լինել նոցա։ Եւ ամենակատարն խումբ տօնից տէրու նականաց՝ առիթ սրբութեան նոցա լիցին։ Ընդ վերանալ ձեռացս՝ թեթեւացին ծանրութիւնք նոցա։ Ընդ բեկանել անմահ Հացին՝ կերակրեսցին կարօտքն ոգիք։ Ընդ բաժակին՝ արբեցն զանմահդ Արիւն, եւ ընդ մեր ճաշակեցցեն զկեանսդ մշտարուդ։ Ի քոյդ դարձցիս զոր արարեր գութ, և մի՛ ընդ իմ՝ ունայն առներ զքո շնորհ»։

Օ՛ն ուրեմն, թօթափենք մտքի այդ դիտեմ բռնուածութիւնն ու կաշկանդում. փշրենք ստրկութեան այդ դժնդակ լուծը՝ որ բողոքականութեան հրապուրիչ նըպաստներով ու շողշողուն խոստումներով կը զօրանայ ու կը ճնշէ՝ մինչեւ ջախջախէ մեր պարանոցը։ Անոնք ո՛չ Պատարագ ունին և ոչ խորհուրդ, ո՛չ խաչ կը ճանչնան, ո՛չ Աստուածածին, ո՛չ սուրբ, ո՛չ տօն, ոչ ջահ մը լուսաբորբոք և ոչ խունկ՝ որուն հետ աղօթքը սլանայ բոցաշունչ, կամ մոմ մը նշուլագեղ՝ որուն հետ յոյսը պլպլայ յարութեան և անմահութեան. այլ և ոչ իսկ Քրիստոս իրենց համար ճշմարիտ Որդի է Աստուծոյ։ Եւ մեր Ազգը կուրօրէն դեռ կը փարի այդ աղանդին, իր Հարց ինկիլի աւանդութիւնն առաթուր կոխելով։ Քահանանք մեր Հայրերուն. օտարն զմեզ կը մոլորցնէ, կը հեռացնէ զմեզ մեր փառապանծ ազգէն, մեր չքնաղ լեզուէն և Աւետարանի պայծառ կրօնքէն։ Բայց աւելի կարեւոր է

քաւարանի վարդապետութիւնը, զոր իր խօսքերէն քաղելով՝ պիտի ցուցնեմ: Քահանային համար կը գրէ, թէ՛ (7) «Միշտ քաւող է Մեծն Աստուծոյ»: Եւ (9) «Զհամօրէն ննջեցեալսն քաւէ աղերսիւ»: Հոս ոչ Արքայութիւնը վայելող, ոչ դժոխքը տանջուող և ոչ ալ Լիմբոսի կամ անկնոնք ննջեցեալ արդարոց վրայ է խօսքը: Արքայութեան մէջ քաւութեան հարկ չկայ, և այդ դիտմամբ աղօթելն՝ անտեղի է: Գժոխքին մէջ եւս քաւութիւն չկայ: Արքայութիւն և դժոխք՝ վերջնական և անյեղաշրջելի վիճակ են հոգւոյն: Փրկչին վճիռը կը հաստատէ զայս, (Մտթ. ԻԵ, 46) Եւ երթիցեն նոքա ի տակնսն յաշիւնսն և արդարքն ի կեանսն յաշիւնսն և արդարքն ի կեանսն յաշիւնսն: Լիմբոսի հոգիներն ալ թէպէտ արդար՝ սակայն դատապարտուած են ըսկըզբական մեղքէն սրբուած չըլլալուն պատճառաւ, ըստ Աւետարանի անդարձ պատգամին (Մրկ. ԺԶ, 16) «Որ հաւատայ և մկրտիցի՝ կեցցէ, և որ ոչն հաւատայ՝ դատապարտեսցի»: և (Յովհ. Գ, 5) «Եթէ ոչ ոք ծնցի ի ջրոյ և ի Հոգւոյ՝ ոչ կարէ մտանել յարքայութիւն Աստուծոյ»: Մեր աղօթքն ասոնց համար ալ աւելորդ է: Ուստի, ըստ Մխ. Գորշի եւ մեր Ս. Հարց վարդապետութեան, կայ յատուկ վիճակ մը կամ (տեղ մը) ուր ննջեցեալները կրնան քաւութիւն գտնել: Սակայն քաւութեան տեղոյն անունը կարեւորութիւն չունի. սկզբունքը, վարդապետութիւնն է կարեւորը: Հայերենի մէջ ՔԱՒԱՐԱՆ կոչելը յարմարագոյն կը թուի. քանի որ միշտ քաւել բայը կը գործածուի: Քաւարան բառն արդէն գործածուած է նախնեաց ըով: Դանբացէքի կարգին մէջ ունինք «Մեղաւորաց քաւարան»: Արդ, եթէ Եկեղեցին ողջերն իրենց մեղքէն մաքրել սրբելուն համար այսպէս կը կոչուի, շատ վայելուչ կերպով պէտք է քաւարան կոչել նաեւ այն տեղն ու վիճակը՝ ուր Եկեղեցւոյ հանգուցեալ անդամք՝ իրենց յանցանքներու ժամանակաւոր պատժէն կը սրբուին, Աստուծոյ երանաւէտ տեսութեան արժանի գտնուելու համար: Վերջապէս,

ինչպէս դաս առնելու տեղը՝ դասարան, և դատ ընելու տեղը՝ դատարան կը կոչենք, տրամաբանական է կարծեմ, քաւութիւն գտնելու տեղն ալ՝ քաւարան անուանենք և ոչ ուրիշ բան: Այսու հանդերձ, սկզբունքն է կարեւորը, անունը բան մը չէ: (25) «Խորք բացցին անդնդոց, և ելցեն ամբարեալքն ի նմա աւարք մերոցն»: Հոս ալ միեւնոյն «քաւութեան բանտին» վրայ է խօսքը, ուր մեր եղբայրներն անոր աւար գացքը են, այս կեանքի սխալմանց հետեւանքով: Կը մաղթէ որ իր հաճոյական աղօթքով՝ ելլեն ազատին այն տեղէն: Գեռ աւելի որոշ են հետեւեալ բացատրութիւնները. (27) «Գեհեան մի՛ ընկալցի զոք, որոց զանմահդ մատուցաք Խորհուրդ»: Ուրեմն Հայ եկեղեցւոյ համոզումն է թէ պատարազը գեհեանն է՝ ազատէ, չի թողոր որ հոգին մէջը փակուի: Նոյնպէս, էջ 35, բացայայտ կերպով կը գրէ. «Գոհանամ, որ... զենմամբ քո քաւեցիք զննջեցեալսն որ այժմ յիշատակեցան»: Եւ առանց որ և իցէ կասկածի տեղ թողու՝ կը յարէ, (36) «Մահ քո աւարեաց զգժոխս հանելով զգերեալսն, և այժմ ի ձեռս իմ գնոյն կատարես խորհուրդ»: Հեղինակին խօսքն ինքնին շատ յայտնի է և մեկնութեան անկարօտ: Ինչպէս որ Քրիստոս իր մահուամբ արդար հոգիները հանց իրենց բանտէն, նոյն կարողութիւնը կը վերազրուի քահանային, որ նոյն փրկարար պաշտօնը կը կատարէ Պատարագին: Սակայն Քրիստոս ո՛չ եթէ դժխքը՝ յաւիտեանապէս դատապարտելոց վայրն իջաւ, այլ լիմբոս, ուր արդարներն իր գալստեան կը սպասէին. իսկ քահանան՝ ոչ դժոխքի և ոչ լիմբոսի հոգիները կ'ազատէ, այլ զանոնք՝ որ Քրիստոսի կնիքը կրելով՝ իր արդար պատուհասով կը տանջուին և իր արդեամբ փրկութեան կը սպասեն: Լիմբոսի հոգիներն՝ իր կնիքը չունին, որով իր արդիւնքներն ալ վայելելու կամ աւոնց մասնակից ըլլալու իրաւունք չունին: Հուսկ կը կնքէ իր խօսքը, և վերջնական աղերսալիք ձայնով մը կը հայցէ, (25)

«Միշտ քաւեցես... զհանգուցեալսն յանուն քո, ասելով այս է Մարմին իմ որ բաշխի ի թողութիւն բազմաց»: Որդւոյն է որ ըսել կու տայ այս խօսքը՝ իր Հօր տեսակ մը իրաւունք և արդարութիւն պահանջելով Հօրէն «այս իմ մարմինս է որ շատերուն համար կը բաշխուի»:

Մխթար Գորշ ո՛չ թէ առաջինն է այս վարդապետութիւնը հնարող Հայաստանեայց եկեղեցւոյն մէջ, այլ ամենուն դաւանածն է զոր ինքն ալ կը կրկնէ: Իրեն ժամանակակից և իրմէ ոչ հեռու Ս. Ներսէս Շնորհալին ալ ճիշտ նոյն լեզուն կը գործածէ խնդրոյս նկատմամբ. Ահա է, կ'ըսէ, քահանային կատարած Խորհուրդը, որ բեմին վրայ՝ սուրբ սեղանին առջեւ բազկատարած կը կենար «Հօր շիջանի, խաւար մերժի. տրտմեալ հոգիքն ուրախանան, զի թողութիւն մեղաց լինի»: Ո՞ր հուրն է այդ որ կը մարի, ինչ խաւար է որ կը փարատի. դժոխքինը. ո՛չ երբեք. «Զի որդն նոցա ոչ մեռանի և հուրն նոցա ոչ շիջանի»: Ո՞վ են այդ տրտում հոգիները՝ որոնց մեղքերը քահանային Պատարագաւ կը թողուին եւ իրենք կ'ուրախանան իրենց ազատութեան վրայ: Անոնք միայն են՝ որ սիրով կը տանջուին մինչեւ մաքրուին, որոնք Քաւարանի մէջ փրկութեան կը սպասեն:

Այսպիսի պատկառելի և արդարեւ հոյակապ Հայրեր ունենալէն վերջ, չեմ գիտեր ինչպէս դեռ մեր Ազգը Լութերի և իր աշակերտաց զուելի կարծիքները կը հանդուրժէ ընդունիլ:

ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔ կամ Ապաշխարութեան Խորհուրդը՝ քրիստոնէութեան մէջ գրեթէ Մկրտութեան հաւասար կարեւոր է: Առանց ատոր՝ քրիստոնէութիւնը, գէթ չափահասներուն համար, ծանր լուծ մը պիտի լինէր և դատապարտութեան անվրէպ դատակնիք: Որովհետեւ Մկրտութեան Շնորհքը՝ մեր ազատութիւնը չի բառնար, չի վերցնիր: Այս Խորհուրդը ոմանք ի Ս. Հարց կոչած են «Փրկութեան երկրորդ լաստափայտ՝ յետ Մկրտութեան»: Եւ արդարեւ, սրբաբար Աւագանէն վերջ,

մարդկային տկարութիւնը՝ իր ազատութեամբ՝ դարձեալ կը գլորի կ'իշխայ անձնական յանցանքի մէջ: Ասկից ինչպէս պէտք է ազատի: Չայս եւս լաւ կը սորվեցնէ մեզ Մ. Գորշ, թէ Խոստովանանքի ձեռքով, (էջ 42-3) «Թէ յաղթիս... յայտնեալ խոստովանութեամբ, և այնպէս ազատիս»: Նոյնպէս (52-53) «Զոր ինչ սխալիս՝ բժշկեալ խոստովանութեամբ. զիւրաքանչիւրն յայտնեալ ճշմարտութեամբ և մի՛ թագուցանի»: Բարոյական սխալի վրայ է հարկաւ խօսքը, այսինքն մեղքի, որով կը վիրաւորուին հոգւոյն թեւերն և այլեւս չի կրնար իր խոյանքներն առնել դէպ ի երկինք առ Աստուած: Բայց ինչ ձեռով պէտք է յայտնել՝ այս մասին քիչ մը վերջ պիտի տեսնենք: Գարձեալ (54-55) «Մի՛ միայն զցանկութեան դիպուածան խոստովանիցիս... այլ խոստովանեալ, թէ բանիւք յանցեալ. և թէ խորհրդօք: Չկամայ և զակամայ: Զտգիտութեան և զանգիտութեան: Զցասման» եւն.:

Այս Խորհուրդն ալ բողոքականներու ազդեցութեամբ և շատ մը եկեղեցականաց տգիտութեամբ, և աններելի անհոգութեամբ չարաչար անտեսուած է: Հետեւաբար հարկ էր որ արդի գրիչները դրական կերպով շեշտած ըլլային կարեւորութիւնը յաճախակի մերձենալու այդ Ս. Խորհրդին, որուն մատակարարութեան կերպն ալ անվաւեր է, Եկեղեցւոյ և մեր Ս. Հարց աւանդութեան հակառակ և դատապարտելի: Հաւաքական խոստովանանքի ձեւ մը գտեր են, ուր ծնրաղիր պատանեաց խումբի վրայ՝ քահանան նախ ամէն տեսակ մեղաց ցանկ մը կը կարդայ՝ որուն յետոյ կը յաւելու արձակման բանաձեւը, և ա՛ռ քեզի խոստովանանք...: Սակայն մեր հեղինակին ուզած խոստովանանքն այսպէս չէ, այլ (54) ՀԱՐԱՆՈՐ Է ՄԱՍՆԱՌԱՐԱՐ (մակրամասնաբար) ՊԱՏՄԵԼ ՀՕՐ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ: Լատին կամ ուրիշ ազգաց վարդապետներէն ո՛չ մէկը այսքան որոշ խօսած է խնդրոյս նկատմամբ: Եւ մենք մեր ձեռքն այսպիսի գոհարներ ունենալով հանդերձ, դեռ պիտի

երթանք ճշմարտութիւնը դասալիք աղանդաւորներէն մուրալու:

Ոչ նուազ ուշադրութեան արժանի է ՀԱՒԱՏՔԸ զոր իբր Հին և Նոր Կտակարանի հարազատ աշակերտ՝ բարձրաբարբառ կը հռչակէ: Իր հաւատքը մտքէն ու սրտէն կը բխի. խորին գիտութեան և կատարեալ առաքինութեան արդիւնք է այն: Կրօնքն իրեն համար հայրենասիրութիւն կամ ազգային եկեղեցի մը ցուցադրելու միջոց չէ: Առաքելական հոգևով ներշնչուած հաւատք մ'է այն, և Ս. Պօղոսի (Եբր. ԺԱ, 1-40) յարասութիւն: Այն ամէն բանի՝ որուն մեր միտքն ու կարողութիւնը չեն հասնիր, և զոր Ս. Գիրքն ու Եկեղեցին մեզ հաւատալիք կը ներկայացնեն՝ զուրկ կը ծռէ հեղինակը, և քրիստոնէական սերտ համոզմամբ կը դաւանի. (30) « Հաւատամ, որոց և ոչ ես զօրեմ՝ կարողիդ եւեթ առնել կամաց »: Ոչ որովհետեւ « Հայաստանեայց » կամ « Ազգային եկեղեցին » ըսած է, անոր համար համբուրելի և պաշտելի են իրեն այդ ճշմարտութիւնք, այլ անոր համար միայն՝ որ Աւետարան, Աւանդութիւն Ընդհանրական և Առաքելական Եկեղեցիէն այնպէս ճանչցուած են: Իր գրածին նպատակը՝ ինքնիրեն ազգասիրի գոյն ու հռչակ մը տալ չէ, ինչպէս ոմանք արդիներէն, այլ կրօնքի ջանք վառ պահել սրտերուն մէջ: Որով դեռ աւելի ազդեցիկ խօսքով կը գոչէ (31) « Հաւատացի և հաւատամ ամենազան առնել զինչ և կամեսցիս »: Եւ իբր վարձատրութիւն իւր այդ հաւատարմութեան, կը հայցէ՝ (31) « Այսոքուք և զիմս ընկալցիս աղերս մաղթանաց »: Այս էր մեր Հարց հոգին, և այնպէս պէտք է ըլլայ ամէն հարազատ Հայու հաւատքը և ոչ տարբեր:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆՍ Լաւ գուշակած ըլլալու է մինչեւ հիմակ յօդուածիս ուշադիր ընթերցողը: Զանացի Միտիթար Գոշի գրութենէն դուրս ցոլացնել մեր կրօնքի զլիաւոր կէտերը, Հաղորդութիւնը, Քա-

հանայութիւնը, Խոստովանութիւնը, Քաւարան և Հաւատք: Նպատակս է ցուցնել Հայութեան՝ թէ այս է մեր կրօնքը, ուստի պէտք է հեռանալ նորաձայն վարդապետութիւններէ:

Բայց հայրենասիրութեան հետ՝ անկեղծութեամբ ևս հաւասարաթափ ընթանալու համար պարզապէս պիտի ըսեմ որ հոս ըրած ակնարկներս՝ վերջերս լոյս տեսած կրօնագիտական նոր գրքեր մը կը շօշափեն:

Պահելով հանդերձ հեղինակներու անձին եւ աստիճանին հանդէպ յարգանքս՝ արդարութեան և ազգասիրութեան պարտք մը կը թեւադրէ ինձ յայտարարել թէ այդ գրուածքները զուրկ են քրիստոնէութիւնը սորվեցնելու յատկութիւններէն: Աստուածային պատգամներու, Հայ եկեղեցւոյ նուիրական աւանդութեանց և Ս. Հարց վարդապետութեան կողմանէ շատ կը կազան. շատ կէտերու մէջ յայտնապէս անհամաձայն են անոնց: Զուրկ քրիստոնէական շնորհէն և օծութենէն՝ իրենց ընդհանուր ձեւին, բացատրութեանց եւ ձգտումներուն մէջ վարակուած են բողոքականութեան աւերիչ հոգևով, հեռացած նախկին քրիստոնէականներու ոճէն եւ վարդապետութիւններէն:

Հետեւաբար խիղճն ու սէրը ցեղին չեն ներեր անոնց մուտքը հայ դպրոցներուն մէջ. Հայ աւանդութեանց պաշտպան անձերուն վրայ կը ծանրանայ սրբազան պարտք մը զանոնք մերժելու: Զայս բողոքելով կը պահանջէ մեր Ս. Հարց հոգին, Լուսաւորչէն մինչեւ Սահակ և Մեսրոպ. Նարեկացի և Շնորհալիներէն մինչեւ Մեծն Միտիթար և Ալիշան: Կը պահանջէ զայս մեր հին ու նոր նահատակներու սուրբ անունը, Կարմիր Վարդանէն մինչև վերջին մարտիրոսին ամբիժ արիւնը յաղթող: Պատրաստ ենք և մեզի պատիւ և պարտք պիտի համարինք նման գրութեանց հեղինակներուն կողմէն եղած ամէն ղրտողութեան պատասխանել մեր այս տողերուն նկատմամբ:

Հ. ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳՍԵԱՆ

Ս. ՍԻՆՈՒԻԱՅԻ ԿՍՄ ԼԱԻ ԵՒՍ ԵԹԵՐԻԱՅԻ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ Ի Ս. ՏԵՂԻՍ

(ՄԱՍՆ Ա.)

Ա. — ... Կը ցուցուէին Ս. Գրոց համեմատ: Յետոյ գնացինք հասանք տեղ մը, ուր սակայն այն վեց լեռները, որոնց ընդմէջէն կ'երթայինք, կը բացուէին և կը ձեւացնէին անսահման, մեծ տափարակ, և շատ գեղեցիկ հովիտ մը, և հովիտէն անդին կ'երեւէր Աստուծոյ սուրբ լեռ՝ Սինա: Իսկ այս վայրը ուր լեռները կ'անջատուէին՝ միացած է այն տեղւոյն հետ՝ ուր ցանկութեան յիշատակները կան:

Ուրեմն երբ այն տեղը կը հասնի մարդ, ինչպէս որ մեզի յիշեցուցին մեր առաջնորդ սուրբերը որ մեզի հետ էին, ըսին թէ՝ « Սովորութիւն է որ աղօթք մ'ընեն այստեղ՝ անոնք որ հոս կու գան, երբոր առաջին անգամ Աստուծոյ լեռը կը սկսի տեսնուիլ »: Ինչպէս որ մենք ալ ըրինք: Եւ այդ տեղէն մինչեւ Աստուծոյ լեռը թերեւս չորս մղոն ըլլայ՝ այն հովտին ճամբով՝ զոր մեծ կոչեցի:

Բ. — Այդ հովիտը սակայն շատ մեծ է, որ կը գտնուի Աստուծոյ լեռան կողին տակը, որ ունի թերեւս, որքան որ մենք կըրցանք տեսնելով չափել կամ ինչպէս իրենք կ'ըսէին՝ մօտաւորապէս (թերեւս) տասնվեց հազար քայլ երկայնք, իսկ լայնքը՝ կ'ըսէին թէ ըլլայ չորս հազար:

Այդ հարկ էր որ մենք այդ հովիտը կտրէինք որպէս զի կարենայինք լեռան մէջ մտնել: Ասիկա սակայն ընդարձակ հովիտ մ'է, և տափարակ, որուն մէջ խորայն իրդերը բնակեցան այն օրերը՝ երբ Ս. Մովսէս Աստուծոյ լեռն ելաւ և

հոն կեցաւ քառասուն օր և քառասուն զիշեր: Այս այն հովիտն է որուն մէջ շինուեցաւ հորթը, և մինչեւ այսօր (անոր) տեղը կը ցուցնեն. որովհետեւ մեծ քար մը տնկուած է հոն: Այս այն հովիտն է՝ որուն ծայրը կը գտնուի այն տեղը՝ ուր Ս. Մովսէս երբ իր աներոջ ոչխարները կ'աւրածէր, Աստուած երկու անգամ խօսեցաւ իրեն՝ հրավառ մորենիէն: Եւ որովհետեւ մեր ճամբան այնպէս էր որ նախ ելլէինք Աստուծոյ լեռը՝ որ անկից կը տեսնուի, որովհետեւ մեր եկած կողմէն էր լաւագոյն ելքը, և անկից կրկին հովտին այն ծայրն իջնէինք, այսինքն ուր որ մորենին կար, որովհետեւ Աստուծոյ լեռան դիւրագոյն էջն անկից էր. ուստի հաճոյ եղաւ մեզի որ՝ յետ տեսնելու մեր փափագածները, Աստուծոյ լեռնէն իջնելով՝ երթայինք հոն ուր մորենին էր, և անկից՝ հովտին լայնքին մէջտեղէն մեր ճամբան վերադառնայինք Աստուծոյ մարդերուն հետ, որոնք մեզի կը ցուցնէին մի առ մի այն տեղերը որ գրուած են, այն հովտին մէջ, ինչպէս որ եղած է:

Ուստի երբոր մենք մեկնեցանք այն տեղէն՝ ուր աղօթած էինք Փառանէն վերադարձին, ճամբան այնպէս եղաւ որ հովտին բերնին մէջտեղէն անցնէինք և մօտենայինք Աստուծոյ լեռան:

Այդ լեռը չորս կողմէն մէկ կը տեսնուի, իսկ երբ մէջը մտնես՝ շատ են, բայց ամբողջ լեռը՝ Աստուծոյ կը կոչուի. և յատկապէս անիկա՝ որուն զագաթը կը